ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ–ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1990–ական թվականները շրջադարձային եղան համաշխարհային պատմության մեջ: Այդ ժամանակահատվածում տեղի ունեցան կարևոր նշանակություն ունեցող մի շարք իրադարձություններ, որոնք վճռական ներգործություն ունեցան համայն մարդկության ճակատագրի վրա և կանխորոշեցին ժամանակակից աշխարհի քաղաքական, տնտեսական, գաղափարական, սոցիալական և մշակութային զարգացման հիմնական ուղղությունները 19–րդ դարում:

Այդ իրադարձությունների մեջ, որոնք արմատապես փոխեցին աշխարհի քաղաքական բնապատկերը, հարկ է նշել սառը պատերազմի ավարտը, ավարտը մի դարաշրջանի, որը մոտ 40 տարի մարդկությանը ահ ու սարսափի մեջ էր պահում Երրորդ համաշխարհային պատերազմի և միջուկային զենքի օգտագործման հավանականությամբ, Խորհրդային Միության լուծարումը, սոցիալիզմի համաշխարհային համակարգի և նրա քաղաքական, տնտեսական և ռազմական կառույցների, այդ թվում և Վարշավայի պայմանագրի կազմակերպության, վերացումը, երկկենտրոն աշխարհի վերածումը միակենտրոնի՝ ԱՄՆ–ի գլխավորությամբ, և այլն:

Այս փոփոխությունները հանգեցրին բոլորովին նոր քաղաքական իրադրության ստեղծմանն աշխարհում, որն իր հերթին նոր խնդիրներ դրեց մարդկության, աշխարհի քաղաքական ուժերի և պետական գործիչների առջև:

Այդուհանդերձ, տեղի ունեցած փոփոխությունները ժամանակակից աշխարը չթողեցին առանց հիմնախնդիրների, և ոչ էլ

պակասեցին նրա հոգսերը: Հներին փոխարինելու եկան նոր խնդիրներ, որոնք քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգեբանական կյանքը դարձրեցին ոչ պակաս լարված:

Մեր հարափոփոխ աշխարհի բնորոշ գծերից մեկը քաղաքական հարթաբեմում բազմաթիվ նորանկախ պետությունների հանդես գալն է, մասնավորապես կապված Խորհրդային Միության, Հարավսլավիայի և Չեխոսլովակիայի կազմալուծման հետ:

Մյուս կարևոր երևույթը մի շարք նոր աշխարհաքաղաքական տարածաշրջանների ձևավորումն է, ի մասնավորի, նախկին ԽՍՀՄ-ի տարածքում:

Մենք ի նկատի ունենք առնվազն չորս նոր աշխարհաքաղաքական գոտիները՝ Բալթյան (Լատվիա, Լիտվա, Էստոնիա), Արևմտյան (Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա), Կենտրոնական Ասիական (Թուրքմենստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ուզբեկստան) և Անդրկովկասյան (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան):

Այս նոր երևույթը պահանջում է հանգամանալի ուսումնասիրություն, որը, հավատացած ենք, կնպաստի ավելի հիմնովին հասկանալու ժամանակակից աշխարհի հիմնախնդիրները և գտնել նրանց լուծումների առավել լավագույն տարբերակները:

Մյուս կողմից հարկ ենք համարում ընդգծել, որ գլոբալ և տարածաշրջանային (ռեգիոնալ) խնդիրները սերտորեն փոխկապակցված են և ներազդում են միմյանց վրա: Տարածաշրջանային խնդիրների ուսումնասիրությունը որոշակի դեր է խաղում գլոբալ խնդիրները և միջազգային իրադրությունը ճիշտ հասկանալու համար:

Անդրկովկասյան աշխարհաքաղաքական գոտին մեկուսացված չէ միջազգային կյանքից և համաշխարհային հիմնախնդիրներից: Նա ձգտում է սերտ քաղաքական և անտեսական հարաբերություններ հաստատել տարբեր երկրների և շրջանների հետ: Սակայն նրա համար կենսական նշանակություն ունեն տարաբնույթ հարաբերություններն իր անմիջական հարևան տարածաշրջանի՝ Մերձավոր Արևելքի և նրա այնպիսի ազդեցիկ երկրների հետ, ինչպես Թուրքիան, Իրանը, արաբական երկրները և այլն: Նույնպիսի ձգտումներ ունեն նաև վերոնշյալ երկրները: Ուստի և պատահական չէ, որ մեր աչքի առջև ձևավորվում է Մերձա-

վորորևելյան–անդրկովկասյան աշխարհաքաղաքական տարածաշրջանը:[1]

Ելնելով դրանից, գտնում ենք, որ կարևոր է լուսաբանել Մերձավորարևելյան–անդրկովկասյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի (ՄԱԱՏ) ձևավորման մի քանի սկզբունքային հարցերը: Այս խնդիրը բարդ է և, բնականաբար, հմարավոր չէ մի հոդվածի շրջանակներում ընգրկել բոլոր հարցերը: Ուստի մեր նպատակն է լուսաբանել այնպիսի սկզբունքային հարցեր, ինչպես, ՄԱԱՏ–ի կազմավորման նախադրյալները, աշխարհաքաղաքական նշանակությունը, հիմնական դերակատարները, նրանց քաղաքական նկրտումները և այլ հարակից հարցեր:

* * *

ՄԱԱՏ–ի ձևավորման համար գոյություն ունեն համապատասխան պատմական, տնտեսական, աշխարհագրական և քաղաքական նախադրյալներ:

Մերձավոր Արևելքը և Անդրկովկասն, ըստ էության, պատկանում են միևնույն աշխարհագրական տարածքին: Անդրկովկասը կամ Հարավային Կովկասը պատմականորեն մշտապես կապված է եղել և կապված է Մերձավոր Արևելքի հետ: Իրականում նա կազմել է մերձավորարևելյան քաղաքական, տնտեսական, մշակութային և կրոնական իրողությունների օրգանական մասը: Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը դարեր շարունակ եղել են մերձավորարևելյան քաղաքական կյանքի կարևոր գործոններից: Իսկ աշխարհագրական մոտիկությունը հնարավոր է դարձրել սերտ և մշտական շփումները, հոգևոր և մշակութային արժեքների փոխանակությունը նրանց միջև: Նրանք ներազդել են միմյանց վրա: Հայաստանը, Վրաստանը և Աղվանքն երբեմն եղել են Մերձավոր Արևելքի տարբեր պետությունների և կայսրությունների դաշնակիցներ, իսկ երբեմն հայտնվել հակադիր ճամբարներում:

Տարածաշրջանի երկրները՝ Ասորեստանը, Բաբելոնը, Պարսկաստանը, Բյուզանդական կայսրությունը, Արաբական խալիֆայությունը, Օսմանյան կայսրությունը և այլն, վճռորոշ դեր են խաղացել անդրկովկասյան երկրների և ժողովուրդների ճակատագրում: Հիշյալ երկրները հաճախ են գրավել Անդրկովկասը և նրա ժողովուրդներին զրկել պետականությունից: Բայց նրանք, հատկապես հայերը և վրացիները, բազմիցս կարողացել են վերա-

կանգնել իրենց պետականությունը, և որպես գործոն ազդել տարածաշրջանի քաղաքական մթնոլորտի ձևավորման վրա: Դեռ ավելին. եղել են պատմական պահեր, երբ նրանք դարձել են զորեղ և կարողացել պահպանել ոչ միայն իրենց անկախությունը, այլև ընդարձակել իրենց տարածքներն ի հաշիվ մերձավորարևելյան իրենց հարևանների:

Հանրահայտ է այն կարևոր դերը, որ խաղացել է Հայաստանը Անդկովկասում և Մերձավոր Արևելքում Արտաշիսյանների ժամանակ (մ.թ.ա. 189–1մ.թ.), մասնավորապես Տիգրան Մեծի թագավորության ժամանակահատվածում (մ.թ.ա. 95–55): Նա ստեղծեց մի հզոր պետություն, իր կայսրությանը կցելով Կապադովկիան, Միջագետքը, Սիրիան, Փյունիկիան, Հրեաստանը և այլն: Նրա տիրույթները Կասպից ծովից Մերձավոր Արևելքով հասնում էին մինչև Միջերկրական ծով և Եգիպտոս: Պարտության մատնելով Պարսկաստանին, Տիգրան Մեծը իրեն հռչակեց Արքայից արքա և մարտահրավեր նետեց Հռոմեական կայսրությանը: Տիգրան II–ի թագավորության տարիներին, մի կարճատև միջոցի, Հաաստանը դարձավ Մերձավոր Արևելքի ամենաուժեղ պետությունը:

Հետագա դարերում նույնպես, Արշակունիների (I–Vդդ.), ինչպես նաև Բագրատունիների (IX–XIդդ.) հարստությունների օրոք, Հայաստանի դերը նշանակալի էր տարածաշրջանի քաղաքական կյանքում:

12–14–րդ դարերում Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում աչքի ընկնող դերակատարում ուներ Վրաստանը:

17–րդ դարում շահական Պարսկաստանը և Օսմանյան կայսրությունը գրավեցին, ապա բաժանեցին Անդրկովկասը: Սակայն 19–րդ դարի սկզբներին, ռուս–պարսկական և ռուս–թուրքական պատերազմներից հետո, համարյա ամբողջ Անդրկովկասը գրավվեց և միացվեց Ռուսական կայսրությանը: Այսպիսով, մոտ երեք դար՝ ընդհուպ մինչև 1990 թվականների սկիզբը, Անդրկովկասը դադարել էր անկախ քաղաքական միավոր լինելուց և, բնականաբար, որևէ ինքնուրույն դեր չէր խաղում տարածաշրջանի քաղաքական կյանքում:

Չնայած այդ հանգամանքին, դարերի ընթացքում Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի միջև գոյություն ունեցած հարուստ և բազմաբնույթ հարաբերությունները մոռացության չէին տրվել: Նրանք խոր հետք էին թողել անդրկովկասյան ժողովուրդների հի-

շողության մեջ: Ահա թե ինչու, երբ 1990 թվականների սկզբներին Անդրկովկասը կրկին հայտնվեց քաղաքական բեմահարթակում որպես անկախ քաղաքական միավոր, շատ դյուրին կերպով և բնականորեն Մերձավոր Արևելքը և Անդրկովկասը կրկին կամրջվեցին: Անդրկովկասի բոլոր ժողովուրդները՝ հայերը, վրացիները, ադրբեջանցիները և մյուս էթնիկական խմբերը, աշխարհագրական առումով, քաղաքականապես և հոգեբանորեն պատրաստ էին հաստատելու սերտ քաղաքական, ստրատեգիական և տնտեսական համագործակցություն իրենց հինավուրց հարևանի՝ Մերձավոր Արևելքի հետ: Այդ էին պահանջում նաև նրանց ազգային անվտանգության, քաղաքական կայունության և տնտեսական զարգացման շահերը: Սակայն այստեղ անհրաժեշտ է կատարել մի կարևոր ճշգրտում.

1990–ական թվականների Անդրկովկասը և Մերձավոր Արևելքը քաղաքական առումով այլևս նախկինը չէին: Մինչ այդ, մոտ 70 տարի, Անդրկովկասը հարաբերակցում էր Մերձավոր Արևելքին որպես ԽՍՀՄ–ի մի մաս, որպես մի մեծ և հզոր տերության հարավային սահման: Իրականում այդ ժամանակաշրջանում գոյություն ունեին ոչ թե անդրկովկասյան–մերձավորարևելյան, այլ խորհրդա–մերձավորարևելյան հարաբերություններ, որի պարագայում Անդրկովկասն ավելի շուտ աշխարհագրական–տարածքային և ոչ թե քաղաքական գործոն էր:

Խորհրդային Միության փլուզումից հետո, Անդրկովկասը քաղաքական ասպարեզ չիջավ որպես մեկ քաղաքական կամ պետական ամբողջություն՝ դաշնություն, համադաշնություն, միություն կամ որևէ այլ կերպ, այլ որպես երեք անկախ պետություններ՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի, աշխարհաքաղաքական տարածք: Նրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես առանձին, ինքնուրույն միավոր, գործում առաջին հերթին ելնելով իր սեփական շահերից, հետամուտ լինելով իր անկախության, տարածաշրջանում իր քաղաքական դիրքերի ամրապնդմանը և տնտեսական զարգացման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Կատարվեց մի կարևոր փոփոխություն ևս, կապված Անդրկովկասի քաղաքական կառուցվածքի հետ: Մինչև 1990–ական թվականների կեսերը Անդրկովկասի տարածքում գործում էին երեք միջազգայնորեն ճանաչված անկախ պետություններ՝ Ադրբե-

ջանը, Հայաստանը և Վրաստանը: Սակայն 90–ական թվականների կեսերից պատկերը փոխվեց: Երկարատև և արյունալի պայքարից հետո, Լեռնային Ղարաբաղը և Արխազիան իրենց հայտարարեցին անկախ հանրապետություն, հրաժարվելով ճանաչել համապատասխանաբար Ադրբեջանի և Վրաստանի իրավասությունը և սուվերենիտետը: Այժմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ունի անկախ պետության բոլոր անկապտելի հատկանիշները՝ ժողովրդի կողմից ընդունված Սահմանադրություն, պառլամենտ, նախագահ, կառավարություն և այլ մարմիններ: Նրա իրավասության ներքո են բոլոր ներքին հարցերը՝ տնտեսական, սոցիալական, կրթական, մշակութային, առողջապահական, ներքին անվտանգության և այլն: ԼՂՀ–ն գործում է որպես կայացած պետություն:

Համանման վիճակում է նաև Աբխազական Հանրապետությունը, որի տարածքում գործում են բացառապես աբխազական օրենքները և Վրաստանը որևէ իրավասություն չունի նրա վրա:

Սակայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Աբխազական Հանրապետությունը միջազգայնորեն դեռևս ճանաչված չեն որպես անկախ պետություններ: Նրանք երկուսն էլ դե–ֆակտո անկախ պետություններ են: Նման կարգավիճակի է ձգտում նաև Հարավային Օսեթիան:

ԼՂՀ–ի և Աբխազիայի գոյությունը որպես դե–ֆակտո անկախ պետություններ քաղաքական իրողություն է, որը հնարավոր չէ անտեսել: Նրանք ազդում են ողջ Անդրկովկասի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի քաղաքական իրադրության և քաղաքական մթնոլորտի ձևավորման վրա: Եվ շատ պետություններ, ինչպես նաև միջազգային կազմակերպություններ, ստիպված են հաշվի առնել այս յուրահատուկ իրավիճակը և այս կամ այն կերպ շփման մեջ մտնել ԼՂՀ–ի և Աբխազիայի հետ: Մենք առաջին հերթին ի նկատի ունենք ԱՄՆ–ը, Ռուսաստանը և Ֆրանսիան, որոնք որպես Մինսկի խմբի եռանախագահներ կանոնավոր կերպով այցելում են ԼՂՀ, հանդիպում և բանակցություններ վարում դարաբաղյան ղեկավարության հետ, Եվրոպական խորհուրդը, ԱՄՆ–ի կոնգրեսի, ինչպես նաև այլ երկրների պառլամենտների ներկայացուցիչները, Համաշխարհային Բանկը և այլն:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Անդրկովկասն այժմ կազմված է երեք դե–յուրե անկախ պետություններից՝ Ադրբեջան, Հա-

յաստան և Վրաստան, և երկու դե–ֆակտո անկախ պետություններից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և Աբխազիայի Հանրապետություն:[2]

Քաղաքական զարգացումների և պետական կազմավորումների առումով որոշակի փոփոխություններ կատարվեցին նաև Մերձավոր Արևելքում, մասնավորապես նրա արաբական հատվածում: Եթե միջին դարերում արաբները միավորված էին մեկ միասնական պետության՝ Արաբական խալիֆայության մեջ, որը մի անձայրածիր կայսրություն էր, ապա Օսմանյան կայսրության կողմից նվաճվելուց հետո, նրանք, կորցնելով պետականությունը, մոտ չորս հարյուր տարի, ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1918թ., դարձան այդ կայսրության սոսկ վիլայեթները՝ նահանգները: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո արաբական երկրները վերածվեցին անգլիական և ֆրանսիական ենթամանդատային տարածքների: Միայն երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած 25–30 տարիների ընթացքում արաբները նվաճեցին իրենց անկախությունը: Սակայն միջազգային ասպարեզում նրանք հայտնվեցին ոչ թե որպես մեկ միասնական պետություն, որ արաբական ազգային առաջնորդների քաղաքական երազանքն էր, այլ առանձին անկախ պետություններ, որոնց թիվն այսօր հասնում է 17–ի: Սուվերեն պետություններ դարձան Եգիպտոսը, Իրաքը, Սիրիան, Լիբանանը, Հորդանանը, Եմենը, Քուվեյթը, Արաբական Միացյալ Էմիրությունները և այլն:

1948թ. ստեղծվեց Իսրայել պետությունը, որը մեծապես ազդեց համայն Մերձավոր Արևելքի քաղաքական իրադրության վրա, հաստատելով ուժերի նոր հավասարակշռություն: Իսկ շահական վարչակարգի տապալումը Իրանում 1979թ. և Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումը ցնցեց ամբողջ Մերձավոր Արևելքը, և ոչ միայն Մերձավոր Արևելքը:

Ահա այսպիսին է մերօրյա Մերձավոր Արևելքի՝ Անդրկովկասի աշխարհաքաղաքական պարտնյորի, պետական կազմը և քաղաքական դիմապատկերը:

Անդրկովկասը, Խորհրդային Միության վերացումից հետո, անմիջապես հայտնվեց մերձավորարևելյան երկրների, առաջին հերթին Թուրքիայի և Իրանի, ինչպես նաև Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի, Լիբանանի և Իսրայելի հետաքրքրությունների կենտրո-

նում: Նրանց առջև բացվեց քաղաքական, տնտեսական և ստրատեգիական գործունեության նոր դաշտ: Եվ նրանք անում են ամեն բան անդրկովկասյան երկրները ներառնելու մերձավորարևելյան աշխարհաքաղաքական, տնտեսական և մշակութային կառույցների մեջ:

Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանն իրենց հերթին նույնպես ձգտում են հաստատել լայնածավալ համագործակցություն մերձավորարևելյան երկրների հետ, հասկանալով նրանց կենսական կարևորությունն իրենց ազգային անվտանգության, քաղաքական կայունության և տնտեսական զարգացման տեսանկյունից:

Այսպիսով, կարելի է ասել, որ Մերձավոր Արևելքը և Անդրկովկասը շարժվում են միմյանց ընդառաջ: Շնորհիվ այս երևույթի, բոլորովին նոր իրադրություն է հառնում, որն արմատապես տարբերվում է այն իրադրությունից, որը գոյություն ուներ մինչև Խորհրդային Միության վերացումը: Նոր իրադրության բնորոշ գծերն են.

Առաջին, ձևավորվեց նոր աշխարհաքաղաքական տարածք, որը կարելի է և պետք է կոչել Մերձավորարևելյան–անդրկովկասյան:

Երկրորդ, մերձավորարևելյան բեմահարթակում որպես ինքնուրույն քաղաքական գործոններ կրկին հայտնվեցին Հայաստանը, Վրաստանը և պատմության մեջ առաջին անգամ 1918թ. որպես պետություն կազմավորված Ադրբեջանը: Դրանով աճեց տարածաշրջանային խնդիրների մեջ ներգրավված երկրների թիվը, որոնք իրենց հետ բերեցին նոր, իրենց սեփական հարցերը:

Երրորդ, Խորհրդային Միության փլուզման հետևանքով, Մերձավոր Արևելքից անհայտացավ գերտերություններից մեկը, որը ահեղ մրցակից էր, հարևան և դաշնակից, որը երկար ժամանակ կարևոր, երբեմն վճռական դեր է խաղացել մերձավորարևելյան գործերում:

Չորրորդ, աննախադեպ կերպով աճեց ԱՄՆ–ի դերակատարումը և նշանակությունն Անդրկովկասի և Մերձավոր Արեելքի գործերում: Նա ջանում է օգտվել նպաստավոր իրավիճակից և տարածաշրջանում դեպքերի զարգացմանը տալ իր ստրատեգիական շահերին առավել համապատասխանող ուղղվածություն:

Հինգերորդ, նոր իրադրության և արմատական փոփոխությունների հետևանքով, հաստատվեց ուժերի նոր հարաբերակցություն, որը նպաստավոր է, մի կողմից, մերձավորարևելյան երկու ամենաուժեղ պետությունների՝ Թուրքիայի և Իրանի, իսկ մյուս կողմից, տարածաշրջանից հազարավոր մղոն հեռավորության վրա գտնվող ԱՄՆ–ի համար:

Վեցերորդ, Մերձավորարևելյան–անդրկովկասյան տարածաշրջանի կազմավորումը պարտադրում է նոր մոտեցումներ ցուցաբերել գոյություն ունեցող հիմնախնդիրների նկատմամբ, ելնելով նաև այն հանգամանքից, որ անհամեմատ մեծացել է հիմնախնդիրների մեջ ներգրավված երկրների թիվը: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր շահերը, որին նա հետամուտ է:

Եվ ի լրումն ասվածին, ավելացնենք, որ նոր տարածաշրջանի կազմավորումով, Մերձավոր Արևելքի հին կոնֆլիկտներին, մասնավորապես արաբա–իսրայելական կոնֆլիկտին, ավելացան անդրկովկասյան՝ դարաբաղյան, աբխազական և հարավօսեթական կոնֆլիկտները: Դա, անշուշտ, մեծացնում է ընդհանուր լարվածությունը և ավելի պայթյունավտանգ դարձնում տարածաշրջանը:

* * *

Մերձավորարևելյան–անդրկովկասյան տարածաշրջանի երկրները և այն պետությունները, որոնք աշխարհագրական առումով թեև չեն պատկանում ՄԱԱՏ–ին, սակայն ունեն կենսական շահեր, հետապնդում են տարբեր աշխարհաքաղաքական և տնտեսական նպատակներ: Մենք նրանց կանվանեինք ՄԱԱՏ–ի հիմնական դերակատարներ: Նման բնութագրման համար հիմք է հանդիսանում այն պարագան, որ նրանք ունեն վիթխարի հնարավորություններ և ազդեցություն տարածաշրջանում քաղաքական իրադրության և ուժերի հաշվեկշռի ձևավորման գործում, ի վիճակի են սահմանելու տարածաշրջանի քաղաքական և տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները և ապագան, ինչպես նաև շատ հաճախ նրանց ձեռքում է գտնվում տարածաշրջանային կոնֆլիկտների լուծման բանալին: Ի նկատի ունենալով այս գործոնները, գլխավոր դերակատարներին մենք կբաժանեինք երեք խմբի:

Առաջին խմբի մեջ, բնականաբար, մտնում են Անդրկովկասի երեք երկրները՝ Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը: Տրամաբանական է այս խմբի մեջ մտցնել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Աբխազիան, որոնք որոշակի դեր են խաղում տարածաշրջանի քաղաքական կյանքում:

Անդրկովկասյան երեք հանրապետությունների արտաքին քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց քաղաքականության վեկտորները տարբեր ուղղվածություն ունեն:

Ադրբեջանը բացահայտորեն կողմնորոշվում է դեպի Թուրքիան, որին նա համարում է իր "ավագ եղբայրը": Նրանք շատ սերտորեն համագործակցում են բոլոր բնագավառներում՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, անգամ ռազմական և համադրում իրենց ջանքերը: Նրանց հարաբերությունները կարելի բնութագրել դաշնակցային և ստրատեգիական: Թուրքիան ակտիվորեն պաշտպանում է Ադրբեջանին միջազգային ասպարեզում, այդ թվում և տարածաշրջանային խնդիրներում:

Բոլորովին այլ են Ադրբեջանի հարաբերությունները տարածաշրջանի մյուս զորեղ պետության՝ Իրանի հետ: Դա կարելի է բնութագրել որպես անկայուն, ոչ բարիդրացիական, որը երբեմն կրում է անսքող թշնամական բնույթ: Ադրբեջանը Աբուլֆազ Էլչիբեյի նախագահության տարիներին գրավել էր բացահայտ թշնամական դիրք Իրանի հանդեպ: Նա անթաքույց կերպով պաշտպանում և ձգտում էր իրականացնել երկու "Ադրբեջանների"՝ Իրանական և Ադրբեջանական Հանրապետության միավորման և "Մեծ" Ադրբեջանի ստեղծման գաղափարը, որը դարձավ նրա տարածաշրջանային քաղաքականության կարևոր անկյունաքարերից մեկը:[3] Իրանը, բնականաբար, հաշտ չէր կարող նայել իր տարածքային ամբողջականությանը սպառնացող ադրբեջանական ոտնձգությունների վրա, որի հետևում նա իրավացիորեն տեսնում էր Անկարայի պանթուրքիստական քաղաքականության իրականացման, տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության և դիրքերի ամրապնդման նկրտումները: Էլչիբեյի անկումից և Հեյդար Ալիևի իշխանության գլուխ գալուց հետո, թեև ադրբեջանա–իրանական հարաբերություններում նկատվեց լարվածության որոշ մեղմացում, սակայն տարաձայնությունները տարածաշրջանային քաղաքական, տնտեսական և ստրատեգիական մի շարք հանգուցային հարցերում, այդ թվում և Կասպից ծովի կարգավիճակի, բնական

հարստությունների օգտագործման և այլն, չվերացան: Մանավանդ, որ Ադրբեջանը շարունակում է մնալ Թուրքիայի ամենահուսալի դաշնակիցը: Ադրբեջանի և Իրանի միջև պարբերաբար ծագում են զանազան խնդիրներ և տարաձայնություններ, որի ժամանակ Ադրբեջանը մշտապես իր հայացքն ուղղում է դեպի Թուրքիա: Ուստի ադրբեջանա–իրանական հարաբերությունները ներկա փուլում կարելի է բնութագրել զուսպ և սառը:

Բավականին ջերմ հարաբերություններ են հաստատվել Ադրբեջանի և Վրաստանի միջև: Նրանք համագործակցում են տարբեր բնագավառներում, իրենց հարաբերությունները դիտարկելով որպես ստրատեգիական: Երկու կողմից էլ առանձնահատուկ նշանակություն է տրվում ադրբեջանա–վրացական համագործակցությանը Կասպիական նավթը Ադրբեջանից Վրաստանի տարածքով Թուրքիա արտահանելու հարցում: Դա շատ ազդեցիկ լծակ է Ադրբեջանի ձեռքում Վրաստանի վրա ճնշում գործադրելու և նրան, Թուրքիայի հետ միասին թուրքական քաղաքական դաշտում ամրագրելու համար: Իսկ Վրաստանը վերին աստիճանի շահագրգռված է, որ Կասպիական նավթն արտահանվի վրացական տարածքով, քանի որ նա դրա հետ է կապում իր տնտեսական զարգացման շատ ու շատ խնդիրներ:

Տարածաշրջանային միակ երկիրը, որի հետ Ադրբեջանը չի հաստատել նորմալ հարաբերություններ, Հայաստանն է: Հայ–ադրբեջանական հարաբերություններ որպես այդպիսին իրականում գոյություն չունեն: Առանձին հանդիպումներ տարբեր մակարդակներով, քննարկումներ կամ հայտարարություններ չեն կարող դիտվել կամ ընդունվել հարաբերությունների փոխարեն: Ադրբեջանը Հայաստանին մեղադրում է Լեռնային Ղարաբաղին օգնելու, աջակցելու և պաշտպանելու մեջ և համարում ագրեսոր: Նա Թուրքիայի հետ միասին շրջափակման է ենթարկել Հայաստանը և ԼՂՀ–ն: Չնայած 1994թ. ստորագրված զինադադարին, հարաբերությունները երկու երկրների միջև մնում են լարված, իսկ իրադրությունը՝ պայթյունավտանգ:

Առաջին խմբի մյուս՝ երկրորդ անդամը՝ Վրաստանը, շատ սերտ հարաբերություններ է հաստատել թե Ադրբեջանի, և թե Թուրքիայի հետ: Սովորաբար նրանց ղեկավարներն այդ հարաբերությունները բնութագրում են բարեկամական, անգամ ստրատեգիական: Ուստի նույնիսկ խոսվում է Անկարա–Թբիլիսի–Բա-

քու առանցքի ձևավորման մասին: Սակայն ակնհայտ է Վրաստանի օրեցօր աճող կախվածությունը թուրքական երկու պետություններից, Թուրքիայից և Ադրբեջանից: Նման առանցքի ձևավորումը, որտեղ տիրապետող և թելադրող ուժը Թուրքիան է լինելու, կփոխեր ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում հօգուտ այդ երեք երկրների, որը հակասում է Հայաստանի, Իրանի և Ռուսաստանի շահերին:

Վրաստանը, դրա հետ մեկտեղ, ձգտում է լավ հարաբերություններ պահպանել նաև Հայաստանի հետ, որը, ընդհանուր առմամբ, հաջողվում է, թեև նրանց միջև երբեմն ծագում են զանազան հարցեր, կապված ջավախքահայության իրավական–վարչական և սոցիալ–տնտեսական վիճակի, կոմունիկացիաների և նման այլ հարցերի հետ: Համենայն դեպս, Վրաստանի և Հայաստանի ղեկավարները պարբերաբար հավաստում են երկու հարևան երկրների միջև եղբայրական հարբերությունների գոյությունը:

Վրաց–իրանական հարաբերությունները նույնպես կարելի է բնութագրել որպես նորմալ: Բայց, այդուհանդերձ, քաղաքական և տնտեսական կապերը նրանց միջև սահմանափակ են և ոչ այքան զարգացած կամ խորացված: Դրա պատճառը, մեր կարծիքով, Մերձավոր Արևելքի խնդիրների նկատմամբ Վրաստանի մոտեցման մեջ է: Վրաստանն ավելի շատ կողմնորոշվում է դեպի թուրքա–ադրբեջանական արեալը, համարելով այն ավելի նախապատվելի իր ազգային շահերի տեսանկյունից:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա ևս: Թե՛ Վրաստանը, և թե՛ Ադրբեջանը ձգտում են օր առաջ դառնալ Արևմտյան քաղաքական, տնտեսական և ռազմական կառույցների, այդ թվում և ՆԱՏՕ–ի անդամ: Նրանց այս դիրքորոշումը որոշակի լարվածություն է ստեղծել Ռուսաստանի հետ փոխհարաբերություններում: Իրանը և որոշ արաբական երկրներ նույնպես անհագստացած են Վրաստանի և Ադրբեջանի նոր կողմնորոշման պատճառով: Դա մտահոգում է նաև Հայաստանին:

Այս խմբի երրորդ անդամը՝ Հայաստանը, անկախություն նվաճելուց հետո հայտարարեց, որ իր արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը բարեկամական հարաբերությունների հաստատումը և զարգացումն է իր անմիջական չորս

հարևան երկրների՝ Թուրքիայի, Իրանի, Ադրբեջանի և Վրաստանի հետ: Սակայն դա նրան չհաջողվեց և ոչ նրա մեղքով:[4]

Հայաստանը բարեկամական հարաբերություններ ունի միայն իր երկու հարևանների՝ Իրանի և Վրաստանի հետ: Բարեկամական հարաբերությունների պահպանումը և հետագա խորացումը նրանց հետ կարևոր է Հայաստանին նրա ազգային անվտանգության, տնտեսական զարգացման և կոմունիկացիաների տեսանկյունից:

Հայաստանին չհաջողվեց կարգավորել իր հարաբերությունները Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Թուրքիան Հայաստանից պահանջում է շատ բարձր գին վճարել դիվանագիտական հարաբերությունների հաստատման դիմաց: Հայաստանից պահանջվում է բավարարել թուրքական երեք նախապայմանները. առաջին, հրաժարվել Թուրքիային 1915թ. ցեղասպանության կազմակերպման և իրականացման մեջ մեղադրելուց; երկրորդ, հանդես գալ պաշտոնական հայտարարությամբ այն մասին, որ Հայաստանը Թուրքիայի նկատմամբ որևէ տարածքային (իմա Արևմտյան Հայաստան) պահանջ չունի, և, երրորդ, Հայաստանը պետք է դադարեցնի իր օգնությունը ԼՂՀ–ին նրա անկախության համար մղվող պայքարում և ստիպի Լեռնային Ղարաբաղին ընդունելու կոնֆլիկտի լուծման ադրբեջանական տարբերակը, հիմնված Ադրբեջանի տիրապետությունը Ղարաբաղի վրա վերահաստատելու սկզբունքի վրա:[5]

Հայաստանը, բնականաբար, մերժում է թուրքական նախապայմանները, գտնելով, որ հարաբերությունների կարգավորումը հնարավոր է միայն հավասարության սկզբունքի վրա, առանց որևէ նախապայմանի, ինչպես, որ դա պահանջում է միջազգային իրավունքը և ՄԱԿ–ի կանոնադրությունը: Բացի այդ, Հայաստանը ելնում է այն իրողությունից, որ հարաբերությունների կարգավորումը պետք է ոչ միայն Հայաստանին, այլ նաև Թուրքիային:

Անհրաժեշտ է կրկին հիշեցնել, որ Թուրքիան փակել է սահմանները Հայաստանի հետ, դրանով իսկ շրջափակման ենթարկելով իր արևելյան հարևանին:

Ինչ վերաբերվում է հայ–ադրբեջանական հարաբերություններին, ապա այդ մասին մենք արդեն խոսել ենք և անհրաժեշտություն չկա նորից անդրադառնալու դրան:

Անդրկովկասյան երեք պետություններից միայն Հայաստանն է, որ ունի բարեկամական սերտ հարաբերություններ Ռուսաստանի հետ: 1997թ. նրանք կնքեցին Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր, որը ծառայում է Հայաստանի ազգային անվտանգության ամրապնդմանը:[6]

Միաժամանակ Հայաստանը բարեկամական հարաբերություններ է պահպանում ԱՄՆ–ի և Եվրոպական Միության (ԵՄ) անդամ երկրների հետ, նրանց հետ հաջողությամբ զարգացնելով քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններ, առանց, սակայն ՆԱՏՕ–ին անդամակցելու հավակնության:

Դժվար չէ նկատել, որ Անդրկովկասը հեռու է համարվելու մեկ միասնական տարածք իր աշխարհաքաղաքական նպատակների նույնության առումով: Իրականում, Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը տարբեր քաղաքականություն են հետապնդում և դա գլխավոր պատճառներից մեկն է, որ տարածաշրջանը չի կարելի համարել կայուն գոտի:

Հայաստանը, հաշվի առնելով ստեղծված պայմանները և ցանկանալով փոխել իրադրությունը, առաջ քաշեց Անդրկովկասի կայունության և անվտանգության ծրագիր, հիմնված 3+3+2 բանաձևի վրա: Համաձայն այդ ծրագրի, Կայունության և անվտանգության պայմանագրին պետք է մասնակցեն Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը (3) + Թուրքիան, Իրանը և Ռուսաստանը (3) + ԱՄՆ–ը և ԵՄ–ն (2):

Հայաստանի առաջարկությունը, մեր կարծիքով, իրատեսական և հավասարակշռված է: Նա ներառնում է բոլոր շարագրգիռ երկրները, ոչ միայն Անդրկովկասի երեք հանրապետությունները, այլև Մերձավոր Արևելքի երկու ամենաազդեցիկ պետությունները՝ Թուրքիան և Իրանը, և ժամանակակից աշխարհի ամենահզոր երկրները՝ ԱՄՆ–ը, Ռուսաստանը և ԵՄ–ի գլխավոր երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան և այլն:

Կայունության և անվտանգության պայմանագրի կնքումը կարող է նպաստել բազմաթիվ հիմնախնդիրների լուծմանը և մեծ հեռանկարներ բացել տնտեսական համագործակցության, կայունության, խաղաղության և անվտանգության առջև Մերձավո-

բարևելյան–անդրկովկասյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում:

Պետությունների երկրորդ խումբը կազմված է մերձավորարևելյան երկրներից՝ Թուրքիայից, Իրանից, արաբական երկրներից և Իսրայելից:

Թուրքիան, օգտվելով ԽՍՀՄ–ի փլուզումից հետո Ռուսաստանի ժամանակավոր թուլացումից, ձգտում է դառնալ ՍԱԱՏ–ի գերտերությունը, ուժեղացնել իր դիրքերը, դուրս մղել Ռուսաստանին տարածաշրջանից, չեզոքացնել Իրանի և այլ պոտենցիալ հավակնորդների ազդեցությունը, և այդպիսով ՍԱԱՏ–ը դնել, եթե ոչ իր տիրապետության տակ, ապա առնվազն իր քաղաքական ազդեցության ներքո:

Սակայն դա Թուրքիայի վերջնական նպատակը չէ: Թուրքիան Անդրկովկասը դիտում է բնական կամուրջ և ձգտում է նրա միջոցով հասնել Կենտրոնական Ասիա, և այդ կերպ իրականացնել իր պանթուրքական երազանքները:

Իրանը նույնպես ձգտում է ուժեղացնել իր դերակատարումն Անդրկովկասում, ամրապնդել իր ազդեցությունն այս ստրատեգիական կարևոր տարածաշրջանում և նվազեցնել կամ չեզոքացնել թուրքական ազդեցությունը: Թուրքական տիրապետության հաստատումը և պանթուրքական ծրագրերի իրականացումը մեծ վտանգ են ներկայացնում Իրանի համար և հակասության մեջ են գտնվում նրա ազգային շահերի հետ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև Իրանի լարված հարաբերություններն ԱՄՆ–ի հետ, որոնք գոյություն ունեն դեռևս 1979թ., երբ տապալվեց շահի վարչակարգը և հռչակվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը: Թուրքիան ԱՄՆ–ի դաշնակիցն է ՆԱՏՕ–ի գծով: Իրանը Թուրքիայի դիրքերի ամրապնդումը ՍԱԱՏ–ում ընկալում է որպես ԱՄՆ–ի ազդեցության հետագա ուժեղացում տարածաշրջանում: Նա, բնականաբար, կձեռնարկի անհրաժեշտ քայլեր կանխելու իր համար անբարենպաստ աշխարաքաղաքական զարգացումները: Եվ Իրանի կողմից ձեռնարկվող սկզբունքային քայլերից մեկն է ամեն գնով ապահովել իր քաղաքական, տնտեսական և մշակութային ներկայությունը տարածաշրջանում և հարաբերությունների զարգացումը նրա երկրների հետ: Ղեկավարվելով այս սկզբունքներով, Իրանը զգույշ է Անդրկովկասի երկրների և Ռուսաստանի հանդեպ իր քա-

ղաքականության մեջ: Նա չի ընթանում նրանց հետ հակամարտության ուղիով, այլ փորձում յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել նրանց ազգային շահերը:

Որոշակի հետաքրքրություններ ունեն մեր տարածաշրջանի նկատմամբ նաև Եգիպտոսը, Սիրիան, Իրաքը, Լիբանանը, Արաբական Միացյալ Էմիրությունները և այլն: Անդրկովկասն ուշադրության արժանի է նրանց համար, առաջին հերթին, որպես Եվրոպայի հետ կապող կամուրջ, առևտրական գործընկեր և տնտեսական ու բանկաֆինանսական գործունեության դաշտ:

Արաբական երկրներին մտահոգում են նաև տարածաշրջանում գերտերություն դառնալու Թուրքիայի հավակնությունները կամ նրա դիրքերի հետագա ուժեղացումը: Հազիվ թե արաբական երկրներին դուր գա իրենց սահմանների անմիջական հարևանությամբ մի նոր գերտերության, թեկուզ և տարածաշրջանային մասշտաբի, հանդես գալը, որն աշխարհաքաղաքական մեծ ախորժակներ ունի:

Եվ, վերջապես, պանթուրքական ծրագրերի իրագործման հարցը: Հարկ է հիշել, որ արաբները չորս հարյուր տարի գտնվել են օսմանյան լծի ներքո և արաբ ժողովուրդը չի մոռացել սուլթանների կառավարման հետ կապված իր պատմության ամենամռայլ և արյունոտ էջերը: Ուստի կարելի է ասել, որ պանթուրքիզմի ոգեկոչումը մեծ վտանգ է ներկայացնում ոչ միայն Ռուսաստանի, Իրանի և Հայաստանի, այլև արաբական երկրների համար:

Վերջին տարիներին, հատկապես 1990–ական թվականներից, անդրկովկասյան թատերաբեմում սկսել է նկատելի դեր կատարել մերձավորարևելյան մեկ այլ պետություն՝ Իսրայելը: Նա լավ հարաբերություններ է հաստատել Ադրբեջանի և Վրաստանի հետ: Միևնույն ժամանակ Իսրայելը հայտարարություններ է անում, որ ցանկանում է նմանատիպ հարաբերություններ զարգացնել նաև Հայաստանի հետ: Սակայն դրանք հայտարարություններից այն կողմ չեն անցնում, մինչդեռ Իսրայելի հարաբերությունները Վրաստանի և Ադրբեջանի հետ վաղուց գործնական բնույթ են կրում և Իսրայելը դարձել է անդրկովկասյան այդ երկու երկրների տնտեսական կյանքի մասնակիցը:

Հայաստանն իր կողմից պատրաստակամ է զարգացնել տարաբնույթ քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններ Իսրայելի հետ: Սակայն դրա անարձագանք մնա-

լը, մեր կարծիքով, բացի այլ գործոններից, պայմանավորված է թուրք–իսրայելական սերտ հարաբերություններով: Դրանք կրում են ստրատեգիական բնույթ և, ըստ էության, ստեղծվել է թուրք–իսրայելական ռազմական դաշինք:[8] Ծանր դրության մեջ գտնվող Իսրայելի համար կարևոր է Թուրքիայի աջակցությունը, որը, սակայն, առանց պայմանների չէ: Թուրքիային սիրաշահելու համար, Իսրայելը ձեռնպահ է մնում զարգացնելու իր հարաբերությունները Հայաստանի հետ, հաշվի առնելով Թուրքիայի կոշտ և անբարյացակամ դիրքորոշումը Հայաստանի հանդեպ: Թուրքական գործոնն իր դերն է ունի նաև այն բանում, որ Իսրայելը ժխտական դիրք է գրավել հայկական ցեղասպանությունը ճանաչելու գործում:[9]

Թուրք–իսրայելական քաղաքական սերտ համագործակցությունը և ռազմական դաշնակցությունը, ՄԱԱՏ–ի երկրների և ժողովուրդների մեծամասնության կողմից ընդունվում է որպես վտանգ, անգամ սպառնալիք իրենց ազգային անվտանգությանը: Ուստի նրանք գրավել են բացասական դիրք այդ դաշինքի դեմ:

Այժմ ՄԱԱՏ–ի գլխավոր դերակատար պետությունների երրորդ խմբի մասին, որը կազմված է Ռուսաստանից, ԱՄՆ–ից և ԵՄ–ից:

Ռուսաստանը, ԽՍՀՄ–ի փլուզումանը և իր անկախության հռչակմանը հաջորդած առաջին տարիներին, զբաղված լինելով ներքաղաքական բարդ և կարևոր հարցերով, անհրաժեշտ ուշադրություն չէր դարձնում մերձավորարևելյան–անդրկովկասյան տարածաշրջանին: Սակայն շուտով նրա ղեկավարությունը հասկացավ թույլ տրված սխալը, մանավանդ այն բանից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ Ռուսաստանի տեղը փորձում է գրավել Թուրքիան, որի հետևում կանգնած է ԱՄՆ–ը:

Անդրկովկասը և Մերձավոր Արևելքը կարևոր ստրատեգիական նշանակություն ունեն Ռուսաստանի համար: Անդրկովկասը Ռուսաստանի մասը կազմող Հյուսիսային Կովկասի թիկունքն է: Հայտնի է, որ այս տարածաշրջանը արյունալի կոնֆլիկտների և միջէթնիկական բախումների (Չեչնիա, Ինգուշեթիա, Հյուսիսային Օսեթիա, Դաղստան և այլն) վտանգավոր գոտի է: Այդ պատճառով էլ անդրկովկասյան երկրների դիրքորոշումը Հյուսիսային Կովկասի իրադարձությունների հանդեպ էական է Ռուսաստանի

համար: Նրա համար բոլորովին էլ երկրորդական հարց չէ նաև, թե ով կլինի տիրապետող ուժ Անդրկովկասում:

Սյուս կողմից, Անդրկովկասը կարևոր է Ռուսաստանի համար իր շփումները Մերձավոր Արևելքի հետ պահպանելու և զարգացնելու տեսանկյունից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անդրկովկասի երկրների անկախացումից հետո Ռուսաստանը զրկվեց Մերձավոր Արևելքի երկրներին անմիջականորեն սահմանակցելուց: Ցամաքային ճանապարհով Ռուսաստանը կարող է դուրս գալ Մերձավոր Արևելք միայն Անդրկովկասի միջոցով:

Ասվածից հետևում է, որ Անդրկովկասի կորուստը Ռուսաստանի համար կարող է շատ ծանր հետևանքներ ունենալ Ռուսաստանի համար, հարված նրա ազգային–պետական շահերին և, կասկածից դուրս է, կհանգեցնի նրա միջազգային դիրքերի թուլացմանը: Այս ակնհայտ ճշմարտության ըմբռնումը Ռուսաստանին կանգնեցրեց Անդրկովկասի նկատմամբ նոր, ավելի ակտիվ և արդյունավետ քաղաքականության որդեգրմանը: Իսկ դա նշանակում էր նաև նոր քաղաքականություն Մերձավոր Արևելքում: Ռուսաստանի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ Անդրկովկասը կենսական ստրատեգիական նշանակություն ունի Ռուսաստանի համար և նա չի հանդուրժի նրան այդ տարածաշրջանից դուրս մղելու և որևէ պետության տիրապետությունը հաստատելու ամեն մի փորձ: Ռուսական այս նախազգուշացումը, որը կրկնվել է բազմիցս, հասցեագրված էր Թուրքիային և ԱՄՆ–ին: Սակայն այս նոր քաղաքականության կենսագործումն այնքան էլ դյուրին չէ, նախ և առաջ, Վրաստանի և Ադրբեջանի հետ Ռուսաստանի բարդ հարաբերությունների պատճառով: Երկու այս պետությունների դիրքորոշումը Ռուսաստանի հանդեպ հազիվ թե հնարավոր է որակել բարեկամական, համենայն դեպս՝ ոչ ռուսամետ: Ընդհակառակն, դա ավելի շուտ հակառուսական դիրքորոշում է, չնայած Վրաստանի տարածքում տեղակայված ռուսական ռազմական բազաներին և կամ Ադրբեջանի և Վրաստանի ղեկավարների կողմից Ռուսաստանի հասցեին երբեմն–երբեմն հնչող հաճոյախոսություններին: Եվ ինչպես արդեն նշել ենք, Ադրբեջանը և Վրաստանը իրենց ավանդական ռուսամետ կողմնորոշումը փոխարինել են արևմտամետ, նույնիսկ կարելի է ասել, թուրքամետ կողմնորոշումով:

Մյուս կողմից, պետք է ընդունել, որ Թուրքիան և ԱՄՆ–ն արձանագրել են որոշ հաջողություններ ներթափանցելու Վրաստանի և Ադրբեջանի քաղաքական–տնտեսական, իսկ վերջին շրջանում նաև ռազմական կառույցները:

Այսպիսով, միակ պետությունն Անդրկովկասում, որի հետ Ռուսաստանն ունի բարեկամական հարաբերություններ, Հայաստանն է: Երկու երկրների ղեկավարությունը հայ–ռուսական հարաբերությունները համարում են ստրատեգիական: Արդեն նշվել է Հայ–ռուսական Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրի մասին: Ավելացնենք, որ Հայաստանի տարածքում տեղակայված է ռուսական ռազմական բազա, որը ծառայում է Հայաստանի ազգային անվտանգության ապահովման և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների հարավային սահմանների պաշտպանությանը:

Այժմ Ռուսաստանը հաղթահարում է անցման շրջանի հետ կապված քաղաքական և տնտեսական ճգնաժամը, աստճանաբար վերականգնում իր ռազմական ներուժը և համաշխարհային տերության նշանակությունը: Նման պայմաններում անհեռանկար, անգամ վտանգավոր է ռուսական շահերի անտեսումը ՄԱԱՏ–ում և կամ Ռուսաստանին այս տարածաշրջանից դուրս մղելու ամեն մի վարձ:

Անդրկովկասյան տարածաշրջանում համեմատաբար նոր դերակատար է ԱՄՆ–ը: Չնայած այդ հանգամանքին, նա հասցրել է վճռակամորեն ցուցադրել իր աշխարհաքաղաքական և տնտեսական հավակնությունները Անդրկովկասի նկատմամբ: ԱՄՆ–ի կառավարությունը մեկ անգամ չէ, որ հայտարարել է, թե Անդրկովկասը ներկայացնում է կենսական կարևորություն ԱՄՆ–ի ազգային շահերի տեսանկյունից:

Իր անդրկովկասյան քաղաքականության մեջ ԱՄՆ–ը ակտիվորեն համագործակցում է Թուրքիայի հետ: Իսկ 1990թ. սկզբներին ԱՄՆ–ն Անդրկովկասում հիմնականում գործում էր Թուրքիայի միջոցով: Ամերիկյան ղեկավարությունը Թուրքիան համարում էր մոդել նորանկախ նախկին խորհրդային հանրապետությունների համար: Բայց հետագայում ԱՄՆ–ը փոխեց իր տակտիկան և սկսեց գործել անմիջականորեն, առանց որևէ միջնորդի, թեև չի հրաժարվել թուրքական ծառայությունից: Նա այդ տարիների ընթացքում կուտակեց որոշակի փորձ անդրկովկաս-

յան հարցերում, որը բավարար է ինքնուրույն գործելու համար սառանց թուրքական խորհուրդների: Մյուս կողմից, ակնհայտ դարձավ, անգամ ԱՄՆ–ի ղեկավարության համար, որ Թուրքիայի հնարավորությունները, ներուժը և նշանակությունը գերագնահատված են: Թուրքիան ունի լուրջ պրոբլեմներ տարածաշրջանում, այդ թվում և թուրքախոս և մուսուլմանական երկրների հետ, որի պատճառով նա ի վիճակի չէ իրագործել այն առաքելությունը, որ նրա վրա դրվում էր 1990–ական թվականների սկզբնական շրջանում:

Տարածաշրջանում նոր դերակատար է ոչ միայն ԱՄՆ–ը, այլև Եվրոպական Միությունը, նրա անդամ երկրները՝ Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան և այլն: Նրանց համար Անդրկովկասն առաջին հերթին բնական կամուրջ է, որը Արևմտյան Եվրոպան ամենակարճ և ամենահարմարավետ ուղիով միացնում է Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի և, այնուհետև, Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, Կորեայի և հեռավորարևելյան այլ երկրների հետ: Այս իմաստով տարածաշրջանը Եվրոպայի համար ունի ստրատեգիական նշանակություն:

Վերոնշյալ երկրները գործում են ինչպես ԵՄ–ի շրջանակներում, այսինքն կոլեկտիվ կերպով, այնպես էլ անհատապես: Նրանք շահագրգռված են Անդրկովկասում կոնֆլիկտների լուծումով, խաղաղության և կայունության հաստատումով, որը կարող է հանդուրժողականության մթնոլորտ ստեղծել և նպաստել առևտրատնտեսական և ֆինանսական գործունեության ծավալմանը:

ԵՄ–ն կարևոր դեր է կատարում Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը եվրոպական քաղաքական, պառլամենտական, տնտեսական և մշակութային կառույցների մեջ ներգրավելու, այդ երկրներում դեմոկրատիայի և դեմոկրատական ինստիտուտների զարգացման և քաղաքացիական հասարակության կառուցման բնագավառում: Եվ, թեև ԵՄ–ի քաղաքական կշիռը անդրկովկասյան գործերում դեռևս այքան մեծ չէ, որքան Ռուսաստանինը կամ ԱՄՆ–ինը, այդուհանդերձ, նա մեծ ներուժ ունեցող կարևոր գործոն է:

* * *

Խորհրդային Միության լուծարումից և նոր անկախ պետությունների առաջացումից հետո, աշխարհաքաղաքական իրադրությունն արմատականորեն փոխվեց ոչ միայն Հարավային Կովկասում, այլև Կենտրոնական Ասիայում և հարևան տարածաշրջաններում: Դա հիմք ծառայեց նոր դաշնությունների, միությունների, միավորումների և աշխարհաքաղաքական զանազան կոմբինացիաների վերաբերյալ նոր գաղափարների և ծրագրերի հրապարակ գալու համար:

Իր ինքնատիպությամբ և կարևորությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում նոր Աշխարհաքաղաքական Մակրոռեգիոնի՝ Մեծ Մերձավոր Արևելքի կազմավորման վերաբերյալ ծրագիրը: Այդ գաղափարը խմորվել է մի շարք ինստիտուտներում և գիտական կենտրոններում: Սակայն ծրագիրն ավելի հանգամանորեն և մանրամասնությամբ մշակվել է Երուսաղեմի Հրեական համալսարանի Հարրի Տրումենի անվան Խաղաղության ինստիտուտում, տարբեր երկրների մի խումբ հետազոտողների (Ջ.Լանդաու, Դալի Օդեհ, Ռ.Ենոք, Վ.Մեսամեդ, տողերիս հեղինակը և այլն), կողմից:

Նախկին Խորհրդային Միության հարավային ընդարձակ տարածքներում (Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում) և Մերձավոր Արևելքում նոր աշխարհաքաղաքական իրադրության, ուժերի հավասարակշռության և քաղաքական, էթնիկական և տնտեսական զարգացումների միտումների, ինչպես նաև գլոբալ զարգացումների վերլուծությունը հեղինակներին բերեց այն եզրակացության, որ մենք գտնվում ենք խոշոր և կարևոր փոփոխությունների նախաշեմին: Անդրկովկասը և Կենտրոնական Ասիան դարձել են գլոբալ քաղաքական և տնտեսական գործընթացների մասնակիցներ և նոր աշխարհաքաղաքական կառույցների ձևավորման էական գործոններ: Նրանք ընդգրկվել են ինտեգրացման գործընթացների մեջ: Ըստ այդմ, ձևավորվում է մի նոր մակրոռեգիոն իր սոցիալ–պատմական արմատներով, որը հետազոտողներն անվանում են Մեծ Մերձավոր Արևելք:

Մեծ Մերձավոր Արևելքը կազմված է չորս ենթատարածքներից:

Առաջին, Կենտրոնական Ասիա, որի մեջ մտնում են Թուրքմենստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Ուզ-

բեկստանը: Երկրորդ ենթատարածքը Անդրկովկասն է՝ Հայաստան,Վրաստան և Ադրբեջան: Երրորդը Արևմտյան Ասիան է, որի մեջ մտնում են Թուրքիան և Իրանը: Եվ, վերջապես, չորրորդ ենթատարածքը Մերձավոր Արևելքն է, որը բաղկացած է արաբական երկրներից, Իսրայելից և Պաղեստինյան ինքնավարությունից: Ահա այսպիսին է Մեծ Մերձավոր Արևելքը տարածքային և կառուցվածքային առումով:

Սույն ծրագրի իրականացումը հնարավոր է Անդրկովկասյան և Կենտրոնական Ասիական ենթատարածքները Արևմտյան Ասիական և Մերձավորարևելյան ենթատարածքների հետ միավորելով: Սակայն, երբ խոսում ենք նոր աշխարհաքաղաքական մակրոռեգիոնի՝ Մեծ Մերձավոր Արևելքի կազմավորման մասին, դա չի նշանակում չորս ենթատարածքները միավորել և ստեղծել մեկ միասնական պետություն: Դա գործնականում հնարավոր չէ կիրառել: Դեռ ավելին, դա կլիներ վտանգավոր արկածախնդրություն:

Նոր աշխարհաքաղաքական մակրոռեգիոնի ինտեգրացման և ձևավորման գործընթացը գտնվում է իր զարգացման սոսկ նախնական փուլում և ընթանում շատ դանդաղորեն: Բայց անժխտելի իրողություն է, որ չորս ենթատարածքների մերձեցման գործընթացն անկասելիորեն առաջ է ընթանում: Կան մի շարք կարևոր ծրագրեր, ինչպես Մեծ մետաքսյա ուղին, ՏՐԱՍԵԿԱ–ն, գազամուղների, նավթամուղների, երկաթուղիների կառուցման ծրագրեր և այլն, որոնց իրագործումը մեծապես նպաստելու է նրանց ինտեգրացմանը և Մեծ Մերձավոր Արևելքի կազմավորմանը:

Միևնույն ժամանակ, չպետք է մոռանալ, որ այս տարածաշրջանը թերևս աշխարհի հակասություններով լի ամենաբարդ տարածքն է: Կան որոշակի հիմնախնդիրներ և գործոններ, որոնք աշխատում են հակառակ ուղղությամբ: Կան տարաձայնություններ, անգամ լուրջ հակասություններ ինչպես յուրաքանչյուր ենթատարածքի ներսում, այնպես էլ ենթատարածքների միջև: Այնպես, որ դեռ վաղ է խոսել շահերի ներդաշնակության մասին այս նոր մակրոռեգիոնում: Այդ բոլորը, ինչպես նաև մյուս պետությունների, առաջին հերթին մեծ պետությունների, դրիքորոշումը լուրջ խոչընդոտ է Մեծ Մերձավոր Արևելքի ձևավորման ճանապարհին:

Այդուհանդերձ, ինչպես նշվեց, գործընթացն սկսվել է և Մեծ Մերձավոր Արևելք ծրագիրը պետք է դիտել ժամանակակից աշխարհի գլոբալացման համատեքստում որպես նրա օրգանական մաս:

Բայց անկախ այն բանից, թե Մեծ Մերձավոր Արևելքի ծրագիրը կիրագործվի, թե ոչ, Սերձավորարևելյան–անդրկովկասյան աշխարհաքաղաքական տարածաշրջանն իրականություն է, որը նշանակալի դեր է խաղում ժամանակակից միջազգային հարաբերություններում:

NIKOLAY HOVHANNISYAN

ON FORMATION OF THE MIDDLE EASTERN–TRANSCAUCASIAN GEOPOLITICAL REGION

One of the characteristic features of our permanently changing world is the appearance of new independent states and formation of new geopolitical regions. After the collapse of the Soviet Union and gaining of independence by Armenia, Azerbaijan and Georgia, had started a process of formation of Middle Eastern — Transcaucasian geopolitical region (METGR) by incorporation of three Transcaucasian states into the geopolitical, economic and cultural structures of the Middle East.

The Transcaucasia historically, geographically, politically and economically is connected with the Middle East. In fact it is an organic part of the Middle Eastern gepopolitical space. The paper deals with the elucidation of some principle aspects of formation of METRG, in particular the historical, geographical, political background of formation of the mentioned region, its main actors and their political ambitions, its geoplitical significance, etc.

After the collapse of the USSR, the Transcaucasia had appeared in the focus of the Middle Eastern countries, first of all Turkey, Iran, as well as Egypt, Iraq, Syria, Lebanon, UAE, Israel, etc. It was opened for them a new field for political, economic and strategic activity.

Armenia, Azerbaijan and Georgia espire to cooperate with the Middle Eastern countries, understanding their vital importance for their national security, political stability and economic development.

So we can confirm that the Middle East and the Transcaucasia are moving towards each other. Due to this phenomenon a new situation aroused, fully different of that, exisiting before.

The countries of the METRG and the states which though geographically do not belong to the region but have vital interests, are the main actors. Each of them pursues its own policy, which impacts on the formation of the political situation and balance of power in the region. We divide them into three groups.

In the first group we include Armenia, Azerbaijan and Georgia. In this group we include also the Nagorno–Karabakh Republic and the Abkhazian Republic. Despite the fact that they are not still recognized de–jure by the international comminity, they exist as de–facto independent states and are playing certain role in the political life of the METRG. So we can say that the contemporary Transcaucasia and consequently the first group consists of five states — three de–jure independent states (Armenia, Azerbaijan, Georgia) and two de–facto independent states (Nagorno–Karabakh Republic, Abkhazian Republic).

The second group of states consists of the Middle Eastern countries — Turkey, Iran, the Arab countries and Israel.

The main actors of the third group are Russia, the USA and the countries of the European Union, first of all the Great Britain, France, Germany, Italy, etc.

Thus METRG now represents itself a crossroad of different strategic interests, a large field of political and economic activity of many countries with their own, sometimes selfish politicaal and strategic purposes and projects.

Among new projects it is deserved to speak about the formation of new Geopolitical Macroregion, called by specialists the Greater Middle East.

The Greater Middle East consists of four subregions: a/ Central Asia (Kazakhstan, Kirgyzstan, Tajikistan, Turkmenistan, Uzbekistan); b/ Transcaucasia (Armenia, Azerbaijan, Georgia); c/ Western Asia (Turkey, Iran) and d/ the Middle East (the Arab countries, Israel, Palestinian entity).

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. N.Hovhannisyan, Formation of the Transcaucasian — Middle Eastern Geopolitical Region, Paper Represented at the XXXVI International Congress of Asian and North African Studies. Montreal–Canada. August 27–September 2, 2000. Yerevan, 2000.
2. Ibid., p. 9.
3. G.Fuller, Turkey Faces East. New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union, RAND, Santa Monica, 1992, p. 55–56.
4. N.Hovhannisyan, The Foreign Policy of Armenia, Yerevan, 1998, p. 11.
5. C.Migdalowitz, Armenia–Azerbaijan Conflict. US Congressional Research Service, Washington, 1995, p. 11; J. Nichol, Transcaucasus Newly Independent States: Political Developments and Implications for US Interest. US Congressional Research Service, Washington, 1995, p.5.
6. The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia. July–August–September. 1997, Yerevan, 1997, p. 19–22.
7. C.Migdalowitz, Armenia–Azerbaijan Conflict, p. 11.
8. Ph.Robins, Turkish–Israeli Relations: From Periphery to the Center, Abu Dabi, 2001.
9. Ibid., p. 6.